ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼ Է ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ ՖՈՐՈՒՄԸ

19.11.2025 12:39

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը Վրաստանի Թբիլիսի քաղաքում մասնակցել է Վրաստան-Հայաստան իրավական վեցերորդ ֆորումին:

Ֆորումի ընթացքում Փաստաբանների պալատի նախագահը հանդես է եկել ելույթով, որում նա մասնավորապես խոսել է իրավական հանրության շրջանում արհեստական բանականության կիրառելիության, դրա հնարավոր ազդեցության և ռիսկերի մասին՝ ինչպես հնարավորությունների, այնպես էլ մասնագիտական մարտահրավերների համատեքստում:

«Արհեստական բանականության կիրառությունը անհրաժեշտ է ենթարկել իրավական կարգավորման հատկապես իրավաբանական բնագավառում՝ սահմանելով պատասխանատվության սուբյեկտներին և տվյալների պաշտպանության կառուցակարգը»,-նշել է Սիմոն Բաբայանը:

Պաշտոնական այցի շրջանակներում ՀՀ փաստաբանների պալատի պատվիրակությունը, ՀՀ արդարադատության նախարարության պատվիրակության հետ համատեղ, Թբիլիսիում այցելել է միասնական հանրային ծառայությունների կենտրոն, ծանոթացել Վրաստանի պաշտոնական տեղեկագրի, Հանրային ծառայության զարգացման գործակալության, Պորբացիայի ազգային ծառայության և այլ կառույցների աշխատանքներին:

Այնուհետև շրջայց է իրականացվել Ռուսթավի քաղաքի կանանց քրեակատարողական հիմնարկում: Վրաստանի գործընկերների ուղեկցությամբ Հայաստանի պատվիրակություններն ուսումնասիրել են ազատությունից զրկված կանանց կենցաղային պայմանները, ծանոթացել քրեակատարողական հիմնարկում իրականացվող սոցիալական և կրթական ծրագրերին:

GE.

თბილისში გაიმართა საქართველო-სომხეთის მეექვსე სამართლებრივი ფორუმი

სომხეთის რესპუბლიკის ადვოკატთა პალატის თავმჯდომარემ სიმონ ბაბაიანმა მონაწილეობა მიიღო საქართველო-სომხეთის მეექვსე სამართლებრივ ფორუმში, რომელიც გაიმართა საქართველოს დედაქალაქ თბილისში.

ფორუმის ფარგლებში, ადვოკატთა პალატის თავმჯდომარე გამოვიდა სიტყვით, რომელშიც ისაუბრა ხელოვნური ინტელექტის გამოყენებადობაზე სამართლებრივ სფეროში, მის შესაძლო გავლენასა და რისკებზე, როგორც შესაძლებლობების, ასევე პროფესიული გამოწვევების კონტექსტში.

„ხელოვნური ინტელექტის გამოყენება უნდა დაექვემდებაროს სამართლებრივ რეგულირებას, განსაკუთრებით იურიდიულ სფეროში, პასუხისმგებლობის სუბიექტებისა და მონაცემთა დაცვის მექანიზმის განსაზღვრით“, - აღნიშნა სიმონ ბაბაიანმა.

ოფიციალური ვიზიტის ფარგლებში, სომხეთის რესპუბლიკის ადვოკატთა პალატის დელეგაცია, სომხეთის რესპუბლიკის იუსტიციის სამინისტროს დელეგაციასთან ერთად, ეწვია საქართველოს საზოგადოებრივი მომსახურების ცენტრს, გაეცნო საქართველოს საინფორმაციო ცენტრის, სახელმწიფო სერვისების განვითარების სააგენტოს, ეროვნული პრობაციის სამსახურისა და სხვა სტრუქტურების მუშაობას.

ამის შემდეგ დელეგაციის წევრები ეწვივნენ ქალაქ რუსთავის ქალთა სასჯელაღსრულების დაწესებულებას. სომხეთის დელეგაციებმა, ქართველ კოლეგებთან ერთად, შეისწავლეს თავისუფლებააღკვეთილი ქალების საცხოვრებელი პირობები და გაეცნენ სასჯელაღსრულების დაწესებულებაში განხორციელებულ სოციალურ და საგანმანათლებლო პროგრამებს.

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })